ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Արտիմետ, ,

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

10 հունվարի 2014թվականի N 1

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման » մասին օրենքի 44-րդ. հոդվածի 2րդ մասով և հիմք ընդունելով Արմավիրի մարզից ստացված թիվ 01/05.1/4605-13 գրությունը .

1.Ստեղծել հանձնաժողով համայնքի անասնագլխաքանակի հաշվառման աշխատանքները իրականացնելու նպատակով համաձայն հավելվածի:

2.Սույն կարգադրությունը ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԶԱՎԵՆ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

20 __ թ. _____ ___
գ.Արտիմետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Արտիմետ, ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 հունվարի 2014թվականի N 1

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի բնակիչներ Հարություն Եղիայի Միրզախանյանը /ծնված 16.05.1941թ/; Գոհար Աղաբաբի Միրզախանյանը /ծնված 09.10.1950թ/; Կարեն Հարությունի Միրզախանյանը /ծնված 28.09.1975թ/ Հասմիկ Հարությունի Միրզախանյանը /ծնված 15.11.1978թ/ , Արմեն Հարությունի Միրզախանյանը /ծնված 13.07.1989թ,/ դիմել են Արմավիրի մարզի, Արտիմետ Չարենցի թիվ11 հասցեում գտնվող , իրեն պատկանող օրինական 0,18575 հա հողամասի վրա կառուցված բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ իրավունքները վերականգնելու խնդրանքով;

Հաշվի առնելով, որ բնակելի նշանակության օժանդակ շենք շինությունները կառուցվել են մինչև 15.05.2001թ հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում ,ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով ,«Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով

1. Վերականգնել Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի բնակիչներ Հարություն Եղիայի միրզախանյանը /ծնված 16.05.1941թ/; Գոհար Աղաբաբի Միրզախանյանը /ծնված 09.10.1950թ/; Կարեն Հարությունի Միրզախանյանը /ծնված 28.09.1975թ/ Հասմիկ Հարությունի Միրզախանյանը /ծնված 15.11.1978թ/ , Արմեն Հարությունի Միրզախանյանը /ծնված 13.07.1989թ,/ գույքային իրավունքները ճանաչելով նրանց սեփականության իրավունքը օրինական 0,18575 հա հողամասի վրա կառուցված բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ:

Բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունները բավարարում են «Հայաստանի Հանրապետության համայնքային վարչական տարածքներում

իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1 և 2 հոդվածների պահանջները: Հողամասը չի ընդգրկված Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսնված հողերի ցանկում: Կառույցները չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ:

2.Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման համապատասխան որոկավորում ստացած անձի կողմից:

3. Առաջարկել Հայաստանի Հանրապետության ԿԱ ԱԳԿՊԿ համապատասխան մարզային ստորաբաժանմանը գրանցել Հարություն Եղիայի Միրզախանյանը /ծնված 16.05.1941թ/; Գոհար Աղաբաբի Միրզախանյանը /ծնված 09.10.1950թ/; Կարեն Հարությունի Միրզախանյանը /ծնված 28.09.1975թ/ Հասմիկ Հարությունի Միրզախանյանը /ծնված 15.11.1978թ/ , Արմեն Հարությունի Միրզախանյանը /ծնված 13.07.1989թ,/ սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի և այդ հողամասում առկա բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

4.0025-0023 ծածկագրին տալ Չարենցի 11 հասցեն:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԶԱՎԵՆ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

20 __ թ. _____ ____
գ.Արտիմետ